ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ք. Աշտարակ 2024թ. նոյեմբերի 12-ին, N 504-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԶԻԿ ՆԻԿՈԼՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ժգ) ենթակետի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 121-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջները, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետի՝ 23.11.2023թ. N490-Ա և 08.11.2024թ. N501 որոշումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2024թ. նոյեմբերի 12-ից դադարեցնել «Աշտարակ քաղաքի Գրիգոր Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նազիկ Նիկոլյանի լիազորությունները՝ մեկ տարվա ընթացքում օրենսդրության խախտման համար կրկնակի կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով և աշխատողի հետ լուծել 2021 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N20 աշխատանքային պայմանագիրը:

2. «Աշտարակ քաղաքի Գրիգոր Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում Նազիկ Նիկոլյանի վերջին աշխատանքային օրը համարել 12.11.2024թ.:

3. Սույն որոշման մասին պատշաճ կարգով իրազեկել Նազիկ Նիկոլյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 12.11.2024 14:54:58 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ